ԷԴԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 27-ին լրացավ հայտնի պատմաբան, դասախոս, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան և հասարակական գործիչ Էդիկ Գարեգինի Մինասյանի ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակը: Տասնամյակներ շարունակ զբաղվելով սիրած մասնագիտությամբ՝ նա կրթել է հազարավոր ուսանողների, որոնց զգալի մասն այսօր եռանդուն գործունեություն է ծավալում Հայաստանի գիտության, կրթության և հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզներում:

Լինելով խնուսցի ու սասունցի գաղթականների բազմանդամ, ավանդապահ և հայրենասեր ընտանիքի զավակ՝ Է. Մինասյանը միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո անվարան ընտրել է պատմաբանի մասնագիտությունը: Նա, 1974 թ. ընդունվելով Մայր բուհի պատմության ֆակուլտետը, այն գերազանցությամբ ավարտել է 1979 թ.՝ ընդունվելով ԵՊՀ ասպիրանտուրա: Երիտասարդ սերնդի հետ աշխատելու Է. Մինասյանի կարողություններն ի հայտ են եկել դեռևս ուսանողական տարիներին, երբ նա, ակտիվորեն մասնակցելով ուսանողական, հասարակական կյանքին, ղեկավարել է պատմության ֆակուլտետում գործող «Պատանի պատմաբան»-ի դպրոցը՝ դեպի ֆակուլտետ ուղղորդելով տասնյակ դպրոցականների:

Է. Մինասյանի ԵՊՀ-ում անցած ճանապարհը բազմաոլորտ ու բազմաբնույթ է: Նա 1979–1982 թթ. աշխատել է պատմության ֆակուլտետի դեկանի օգնական, իսկ 1982 թ. դասախոսական աշխատանքի անցել ԽՄԿԿ պատմության ամբիոնում: 1986–1994 թթ. նա եղել է ԵՊՀ արտասահմանյան քաղաքացիների ֆակուլտետի ավագ դասախոս, ապա դոցենտ և հումանիտար առարկաների ամբիոնի վարիչ: 1994 թվականից մինչ օրս Է. Մինասյանը պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի դասախոս է: Այստեղ նա զբաղեցրել է դոցենտի, իսկ 2005 թ.՝ պրոֆեսորի պաշտոններ:

Դասախոսական աշխատանքին զուգահեռ Է. Մինասյանը պատմության ֆակուլտետում զբաղվել է վարչական աշխատանքով: 1999–2009 թթ. եղել է դեկանի տեղակալ, իսկ 2009 թ. փետրվարից՝ ընտրվել պատմության ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

Է. Մինասյանը Մայր բուհում իր աշխատանքային կենսագրության բոլոր փուլերում ու օղակներում, շնորհիվ մասնագիտական և մարդկային բարձր արժանիքների, կարողացել է վաստակել իրեն շրջապատողների վստահությունը, սերն ու խորին հարգանքը: Է. Մինասյան մարդը, դասախոսը և դեկանը սիրված է բոլորի կողմից: Հատկապես պատմության ֆակուլտետի յուրաքանչյուր դասախոս, աշխատակից և ուսանող դժվարին պահերին իր կողքին մշտապես զգում է նրա հոգատարությունը: Հոբելյարի մարդկային ու քաղաքացիական բարձր հատկանիշների, կազմակերպչական կարողությունների և իսկական հայրենասեր լինելու անառարկելի վկայությունն են նաև վերջին տարիներին ֆակուլտետի շրջանավարտներին իրենց դիպլոմները պատմական հայրենիքի նշանավոր կենտրոններում հանձնելու գեղեցիկ ավանդույթի սկզբնավորումը:

Մեծ է նաև Է. Մինասյանի գիտական վաստակն ու ներդրումը հայոց նորագույն և հատկապես Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ուսումնասիրության գործում: 1985 թ. Խորհրդային Հայաստանի տնտեսական, սոցիալական որոշ հարցերին վերաբերող թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո, արդեն նորանկախ պետականության պայմաններում՝ 2003 թ., նա պաշտպանում է «Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990–2003 թթ.» թեմայով դոկտորական ատենախոսությունը, որը նրա տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն էր: Դրանից հետո շարունակելով Հայաստանի երրորդ հանրապետության պատմության մնացած ոլորտների ուսումնասիրությունը՝ Է. Մինասյանը 2013 թ. հրատարակում է «Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն» վերտառությամբ հիմնարար աշխատությունը, որը լուրջ ներդրում է հայագիտության բնագավառում: Նշելի է, որ բացի Հայաստանի երրորդ հանրապետության պատմությունից՝ նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում են նաև բազմաթիվ այլ խնդիրներ՝ հայ դիվանագիտության պատմություն, Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության պատմություն և այլն: Է. Մինասյանն այն մարդկանցից է, ով կարողանում է համատեղել վարչական աշխատանքը, ակտիվ հասարակական և գիտական գործունեությունը, ինչի անհերքելի ապացույցն են նրա հրատարակած 7 մենագրությունները,

շուրջ երեք տասնյակ բուհական և դպրոցական դասագրքերն ու ուսումնամեթոդական ձեռնարկները, նաև 100-ից ավելի գիտական հոդվածները:

Է. Մինասյանի անսպառ եռանդը չի սահմանափակվում լոկ գիտական, դասախոսական և վարչական ոլորտներով: Բոլորին քաջ հայտնի է հանրապետության հասարակական կյանքի տարբեր ոլորտներում նրա ծավալած եռանդուն գործունեությունը: ՀՀ Հանրային խորհրդի անդամ, Երկրապահ կամավորականների միության վարչության անդամ, «Խնուս» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, գիտական մի քանի հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ… Թվարկվածներն հոբելյարի բազմազբաղ գործունեությունը բնութագրող սոսկ մի քանի ուղղություններն են:

Անհերքելի է Է. Մինասյանի անձնական ներդրումը երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Հատկապես գնահատելի են ազգային բանակի և առաջին հերթին ԼՂՀ պաշտպանության բանակի տարբեր զորամասեր կատարած նրա բազմաթիվ այցելությունները և կարդացած դասախոսությունները:

Է. Մինասյանի գիտամանկավարժական ու հասարակական գործունեությունը և տարբեր ոլորտներում ունեցած ներդրումն ու վաստակը արժանվույնս են գնահատվել ինչպես Մայր բուհի, այնպես էլ հանրապետության ղեկավարության կողմից: Դրա վկայությունն են նրան շնորհված պետական ու գերատեսչական բազմաթիվ պարգևները՝ հանրապետության նախագահի հրամանագրով շնորհված «Մովսես Խորենացու» մեդալը, ՀՀ վարչապետի հուշամեդալը, ՀՀ Ազգային ժողովի նախագահի պատվո մեդալը, ՀՀ պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ» ու «Դրաստամատ Կանայան» մեդալները, Լեռնային Ղարաբաղի ազատագրության համար ոսկե մեդալը, «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշանը, Ֆրիտյոֆ Նանսենի ոսկե հուշամեդալը, ԵՊՀ ոսկե մեդալը և այլն:

Ցանկանանք մեծարգո հոբելյարին երկար տարիների կյանք, առողջություն, բեղուն գրիչ ու նոր աշխատություններ:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,
ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ,
ՎԱՀԱԳՆ ՀԱԿՈԲՅԱՆ